ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/2009թ.-ի ընթացքում մարդկանց շահագործման՝ «Թրաֆիքինգի» դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված աշխատանքների մասին/

ՀՀ քրեական օրենսգրքի 132, 132[1] հոդվածներ

«Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը»

«Մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձեւերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը»

2009թ.-ի ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի **132, 132[1]** հոդվածների հատկանիշներով իրականացվել է վարույթ **15** քրեական գործերով: */ևս 1 քր. գործով վարույթ է իրականացվել ՀՀ ԱԱԾ կողմից, որը 2009թ.-ին կասեցվել է և որի վերաբերյալ տեղեկությունները սույն հաշվետվությունում ներառված չեն/:*

Նշված գործերից **7**-ը 2008թ.-ին 132-րդ, 132[1]-րդ հոդվածներով հարուցված և 2009թ. փոխանցված գործեր են: Այդ գործերից **1**-ը, որը վերաբերվում էր ՀՀ-ից ՌԴ աշխատանքային թրաֆիքինգին՝ կարճվել է ՀՀ քր.դատ.օր.-ի 35-րդ հոդվածով: Մյուս **6** գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել ևս **21** նոր զոհեր և նոր **2** անձանց առաջադրվել է մեղադրանք ՀՀ քր.օր.-ի 132-րդ, 132[1]-րդ հոդվածներով:

2009թ. *ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներով փոխանցված քր. գործերը ըստ ուղղությունների*					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
1	**3** *որից կին-3*	**-**	**ՀՀ**	**Թուրքիա**	**Պոռնկություն**
3	**7** *որից կին-7*	**1** *որից կին-1*	**ՀՀ**	**ԱՄԷ**	**Պոռնկություն**
1	**11** *որից կին-11*	**1** *որից կին-0*	**ՌԴ**	**ՀՀ**	**Սեռական այլ ձևեր**
1	**-**	**-**	**ՀՀ**	**ՀՀ**	**Մուրացկանություն**

3 քր. գործերը՝ նախորդ տարիներին հարուցված, կասեցված այնուհետև 2009թ.-ին վերսկսված գործեր են: Այս գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել **12** նոր զոհեր և նոր **3** անձի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր.օր.-ի 132-րդ, 132.1-րդ հոդվածներով:

2009թ. ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներով վերսկսված քր. գործերը ըստ_ուղղությունների					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
1	11 *որից կին-11*	3 *որից կին-2*	ՀՀ	Թուրքիա	Պոռնկություն
2	1 *որից կին-1*	-	ՀՀ	ԱՄԷ	Պոռնկություն

1 քրեական գործ 2008թ.-ին հարուցվել է ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածի «Անչափահասին մուրացկանության մեջ ներգրավելու» հատկանիշներով, փոխանցվել 2009թ., այնուհետև 12.02.2009թ.-ին վերաորակվել է 132[1]-րդ հոդվածի: Նշված գործով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 5 նոր զոհեր ևս 1 անձի առաջադրվել է մեղադրանք ՀՀ քր.օր.-ի 132-րդ, 132[1]-րդ հոդվածներով:

2009թ. ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներով վերաորակված քր. գործերը ըստ_ուղղությունների					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
1	5 *որից կին-0* *անչափահաս-5*	1 *որից կին-0*	ՀՀ	ՀՀ	Մուրացկանություն

Քրեական 4 գործեր 2009թ.-ին հայտնաբերված և հարուցված ամբողջությամբ նոր քրեական գործեր են: Այդ գործերից 1-ը, որը վերաբերվում էր ՀՀ-ից ՌԴ աշխատանքային թրաֆիքինգին՝ կարճվել է ՀՀ քր.դատ.օր.-ի 35-րդ հոդվածով: Մնացած 3 գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 14 զոհեր, մեղադրյալները 4-ն են:

2009թ. ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներով հարուցված քր. գործերը ըստ_ուղղությունների					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
1	5 *որից կին-5*	2 *որից կին-2*	ՀՀ	ԱՄԷ	Պոռնկություն
1	8 *որից կին-3*	1 *որից կին-0*	ՀՀ	ՌԴ	Աշխատանքային
1	1 *որից կին-1*	1 *որից կին-0*	ՀՀ	ՀՀ	Պոռնկություն

2009թ.-ի ընթացքում քննված 15 քր. գործերից 2-ը կարճվել են, 2-ը կասեցվել, 5 քր. գործեր ավարտվել են և ուղարկվել դատարան, իսկ մնացած 6 գործերով անջատվել են մասեր՝ որոնք նույնպես ուղարկվել են դատարան: ՀՀ քր. օր.-ի 132, 132.1 հոդվածներով հարուցված որևէ քր. գործի վարույթ 2010թ. չի փոխանցվել:

2009թ.	*ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով քր. գործերի ընթացքը*				
Քր.գործեր	Ավարտված	Կարճված	Կասեցված	Կաս/Դատ	Փոխանցվել է 2010թ.
15	5	2	2	6	0

Ընդհանուր առմամբ 2009թ.-ի ընթացքում հայտնաբերվել և տուժող են ճանաչվել **60** անձինք, որոնցից **8**-ի վերաբերյալ քր. գործը կաճվել է ՀՀ քր.դատ.օր.-ի 35-րդ հոդվածով: Հետագա աջակցության նպատակով հասարակական կազմակերպություններ են ուղղորդվել **22** անձինք:

ՀՀ քր. օր.-ի 132-րդ, 132.1-րդ հոդվածների հատկանիշներով քրեական գործերով 2009թ.-ի ընթացքում որպես մեղադրյալ ներգրավված **10** անձանցից **4**-ի նկատմամբ կայացվել է որոշում հետախուզում հայտարարելու մասին, **4**-ը գտնվում են կալանքի տակ և նրանց վերաբերյալ գործերը ուղարկվել են դատարան, իսկ **2**-ի վերաբերյալ արդեն կայացվել են դատավճիռներ:

2009թ.	***ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով մեղադրյալներ***		
Մեղադրյալ	Դատապարտված	Կալանքի տակ	Հետախուզում
10 *որից կին-5*	**2** *որից կին-1*	**4** *որից կին-2*	**4** *որից կին-2*

Ընդհանուր առմամբ 2009թ.-ի ընթացքում **11** անձինք դատապարտվել են ՀՀ քր.օր.-ի 132-րդ, 132.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություն կատարելու համար՝ համապատասխանաբար **13** տարի, **5** տարի, **4** տարի, **7** տարի, **8** տարի, **9** տարի, **7** տարի 6 ամիս, **5** տարի, **3** տարի, **11** տարի, **13** տարի ազատազրկման: Եվս **1** անձ վերոգրյալ գործերի հետ կապված դատապարտվել է ՀՀ քր.օր.-ի 38-262 և 340 հոդվածներով՝ **1** տարի ազատազրկման և **200.000** ՀՀ դրամ տուգանքով:

01.01.2009թ.-ի դրությամբ ՀՀ քր. օր.-ի 132-րդ, 132[1]-րդ հոդվածների հատկանիշներով հանցագործություն կատարելու համար հետախուզման մեջ են գտնվել **21** անձինք: 2009թ. ընթացքում **1** անձի հետախուզումը դադարեցվել է քր. գործը կարճելու կապակցությամբ և հայտնաբերվել են **5**-ը: Հետախուզում է հայտարարվել ևս **5**-ի նկատմամբ: **20** անձինք 31.12.2009թ.-ի դրությամբ դեռ գտնվում են հետախուզման մեջ:

2009թ. *ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով հետախուզվողներ*			
01.01.09թ.-ի դրությամբ	2009-թ.-ի ընթացքում հայտարարվել է	2009-թ.-ի ընթացքում դադարեցվել և հայտնաբերվել են	15.12.09թ.-ի դրությամբ
21	**5**	**6**	**20**

ՀՀ քրեական օրենսգրքի 166 հոդված

«Երեխային հակահասարակական գործունեության կատարելուն ներգրավելը»

2009թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի **166**-րդ հոդվածի՝ անչափահասին մուրացկանության մեջ ներգրավելու հատկանիշներով ՀՀ ոստիկանությունում իրականացվել է վարույթ **1** նախկինում հարուցված քրեական գործով, որը 2008թ.-ին հարուցվել է ՀՀ քր. օր.-ի **166**-րդ հոդվածի հատկանիշներով, փոխանցվել 2009թ., այնուհետև 2009թ.-ին վերաորակվել է **132**[1]-րդ հոդվածի:

Նշված քր. գործը սույն հաշվետվությունում հաշվարկված է ՀՀ քրեական օրենսգրքի 132, 132[1] հոդվածներով հարուցված քր. գործերի վերլուծության մասում:

ՀՀ քրեական օրենսգրքի 168 հոդված

«Երեխայի առք ու վաճառքը»

2009թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի **168**-րդ հոդվածի հատկանիշներով վարույթ է իրականացվել քրեական **4** գործերով:

Նշված գործերից **1**-ը 2008թ.-ին 168-րդ հոդվածով հարուցված և 2009թ. փոխանցված գործ է, որով 2009թ.-ի ընթացքում հայտնաբերվել են ևս **4** նոր զոհեր, ինչպես նաև որպես մեղադրյալ են ներգրավվել **2** անձինք, որոնցից մեկը դատապարտվել է **5** տարի 6 ամիս ազատազրկման, իսկ մյուսը **5** տարի ազատազրկման:

2009թ. ՀՀ քր.օր.-ի 168 հոդվածով փոխանցված քր. գործեր				
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր
1	**4**	**2**	ՀՀ	Ֆրանսիա

Քրեական մյուս **3** գործերը 2009թ.-ին հայտնաբերված և հարուցված ամբողջությամբ նոր քրեական գործեր են: Այդ գործերից մեկը կարճվել է ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածով: Մյուս գործով տուժող է ճանաչվել **1** զոհ, մեղադրյալը նույնպես **1**-ն է, որը դատապարտվել է 5 տարի պայմանական ազատազրկման: Եվս մեկ գործը հարուցվել է ՀՀ ԱԱԾ նախաձեռնությամբ և 12.2009թ.ին փոխանցվել ՀՀ ոստիկանության ՔԳՎ վարույթ: Վերջին գործով առայժմ մեղադրյալներ չեն ներգրավվել և տուժողներ չեն ճանաչվել:

2009թ. ՀՀ քր.օր.-ի 168 հոդվածով հարուցված քր. գործեր				
Քր. գործ	Զոհ	Մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր
2	**1**	**1**	ՀՀ	ՀՀ

ՀՀ քրեական օրենսգրքի 126 հոդված

«Մարմնի մասեր կամ հյուսվածքներ տալուն հարկադրելը»

2009թ.-ի ընթացքում ՀՀ քր. օր.-ի 126-րդ հոդվածի հատկանիշներով հանցագործության դեպքեր չեն արձանագրվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 261, 262 հոդվածներ

«Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը»

«Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը»

ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ, 262-րդ հոդվածների հատկանիշներով 2009թ.-ի ընթացքում հարուցվել են քրեական **45** նոր գործեր, որոնցից **3**-ը վերաբերվել են ՀՀ պետական սահմանը հատելով փոխադրելով անձի պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն՝ այդ թվում 2-ը ԱՄԷ իսկ 1-ը Թուրքիա, **26**-ը՝ մահճակալներով սննդի օբյեկտների՝ «Հյուրանոցային համալիների» աշխատակիցների կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքերին, **9**-ը տաքսու վարորդների կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու, ներգրավելու դեպքերին՝ այդ թվում 2 դեպքերը անչափահասների պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելուն կամ նպաստելուն, իսկ մնացած **7**-ը պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու, ներգրավելու այլ դեպքերին, որից 2-ը անչափահասների պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքերին:

2009թ. *ՀՀ քր.օր.-ի 261, 262 հոդվածներով քր. գործերը ըստ բնույթի*				
Քր. գործ	Միջսահմանային	Հյուրանոցային համալիր	Տաքսու վարորդ	Այլ
45	**3** *որից ԱՄԷ-2, Թուրքիա -1*	**26**	**9** *որից* *անչափահասին - 2*	**7** *որից* *անչափահասին - 2*

ՀՀ քր.օր.-ի 261-րդ, 262-րդ հոդվածների հատկանիշներով հանցագործություն կատարելու համար 01.01.2009թ.-ի դրությամբ հետախուզման մեջ են գտնվել **5** անձինք, 2009թ.-ի ընթացքում հետախուզում է հայտարարվել ևս **4**-ի նկատմամբ, նույն ժամանակահատվածում հայտնաբերվել են **2**-ը: 31.12.09թ.-ի դրությամբ հետախուզվում են **7** անձինք:

2009թ. ՀՀ քր. օր.-ի 261, 262 հոդվածներով հետախուզվողներ			
01.01.09թ.-ի դրությամբ հետախուզվել են	2009-թ.-ի ընթացքում հայտարարվել է	2009-թ.-ի ընթացքում հայտնաբերվել են	31.12.09թ.-ի դրությամբ հետախուզվում են
5	**4**	**2**	**7**

2009թ.-ի ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում կատարված աշխատանքներում մեծ տեղ են զբաղեցրել ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումները:

Թրաֆիքինգին վերաբերվող օրենսդրության բացերի և հակասությունների շտկման նպատակով ՀՀ ոստիկանության նախաձեռնությամբ թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում ստեղծվել է և ոստիկանության կողմից համակարգվում է ՀՀ իրավական ակտերի քննարկման և դրանց միջազգային փաստաթղթերին համապատասխանեցման հարցերով աշխատանքային ենթախումբ: Ենթախմբի կողմից մշակվել և 2009թ.-ի նոյեմբեր ամսին խորհրդի քննարկմանն է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

2009 թվականի ընթացքում ոստիկանության համակարգմամբ և անմիջական մասնակցությամբ ոստիկանության թվով 119 աշխատակիցների համար կազմակերպվել են «Թրաֆիքինգի» խնդիրներին վերաբերվող դասընթացներ:

Ոստիկանության աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև տեղական և միջազգային խորհրդաժողովներին և հանդիպումներին:

Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի աշխատակիցների կողմից դասախոսություններ են կարդացվել լրագրողների, խաղաղապահ ուժերի, ոստիկանության քննիչների, Ինտերպոլի ԱԿԲ աշխատակիցների, երիտասարդների համար և միջազգային կազմակերպությունների կողմից նախաձեռնված սեմինարների ընթացքում:

Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հետ փոխհամագործակցությամբ 3 անգամ «02» շաբաթաթերթի և 2 անգամ հեռուստածրագրի միջոցով անդրադարձ է կատարվել թրաֆիքինգի խնդրին: Նյութեր են տեղադրվել police.am կայքում: Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի աշխատակիցների մասնակցությամբ նկարահանվել են հաղորդումներ «Երկիր Մեդիա», «Հ2», «Հ1», «Կենտրոն», «Շանթ», «Ա1+» ընկերությունների կողմից, որոնք բազմաթիվ անգամ ցուցադրվել են տարբեր հեռուստաընկերություններով: Հաղորդում է կազմակերպվել նաև «Ազատություն»

ռադիոկայանով: ՀՀ ոստիկանության ղեկավարությունը մամլո ասուլիսների ընթացքում բազմիցս անդրադարձել է թրաֆիքինգի դեմ տարվող պայքարին: ԱՄԷ-ում ՀՀ դեսպանատան միջոցով նյութեր են տրամադրվել ԱՄԷ ԶԼՄ-ներին: Մի շարք նյութեր են տրամադրվել նաև այլ լրատվական միջոցներին:

ՄԱԶԾ հետ համագործակցությամբ պատրաստվել են ռիսկային խմբերում տարածելուն ուղղված կախազարդեր՝ ոստիկանության, հյուպատոսական ծառայությունների և ՀԿ-ների թեժ գծերի վերաբերյալ տեղեկատվությամբ, նախապատրաստման փուլում է գտնվում իրավապահ մարմինների համար նախատեսված զոհի կերպավորման չափորոշիչներով պլաստիկ քարտեր, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ:

ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և ստեղծվել է համապատասխան վերլուծական համակարգչային ծրագիր, որը մասնակիորեն բավարարում է առաջադրված պահանջները:

Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ զոհ դարձած անձանց ազգային ուղղորդման մեխանիզմում նախատեսված առաջարկներին համապատասխան 21.07.2009թ.-ին հաստատվել է ՀՀ ոստիկանության պետի թիվ-1978 հրամանը՝ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

ՀՀ Ոստիկանություն